ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 236 Ա

ԿԱՐԻՆԵ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 161-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով Կարինե Ստեփանյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Կարինե Ստեփանյանին 2026 թվականի սեպտեմբերի 15-ից 22-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 6 աշխատանքային օր տևողությամբ:
2. Կարինե Ստեփանյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության ֆոնդապահ Աստղիկ Դանիելյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2026 թվականի սեպտեմբերի 23-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

14.09.2026

X

Подписано: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026 թվականի սեպտեմբերի 14
ք.Եղեգնաձոր